

Եվրամիության Արևելյան գործընկերություն ծրագիրը և Ռուսաստանի Դաշնությունը

Ազյան Վ., Սաքանյան Հ.

Արևելյան գործընկերությունը Եվրամիության ծրագրերից է, որը նպատակ ունի խթանելու փոխադարձ կապերն ու համագործակցության նոր չափումների ստեղծումն ու զարգացումը ԵՄ-ի, իսկ մյուս կողմից նախկին ԽՍՀՄ-ի 6 պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ուկրաինայի և Մոլդովայի միջև: Ինչպես ամրագրված է 2009թ.-ի մայիսի 7-ին Պրահայում ընդունված միասնական հռչակագրում, որն էլ ծրագրի իրագործման պաշտոնական սկիզբը դարձավ, Արևելյան գործընկերությունը նպատակադրված է ստեղծել անհրաժեշտ պայմաններ ԵՄ-ի և գործընկեր պետությունների միջև քաղաքական հաղորդակցումը և հետագա տնտեսական ինտեգրումը ապահովելու համար: Այն չի նախատեսում ԵՄ-ին անդամակցություն, սակայն մի շարք օգուտներ է բերում մասնակիցներին: Ծրագիրը նախատեսում է նաև վերափոխումների իրագործում հետխորհրդային վեց հանրապետություններում, երկկողմ ու բազմակողմ համաձայնագրերի կնքում, միասնական ինստիտուտների կառուցման ծրագրեր, ազատ առևտրի գոտիների ձևավորում, մուտքի արտոնագրի ռեժիմի ազատականացում, ինչպես նաև էներգետիկ անվտանգության ապահովում:¹

Հարկ է նշել, որ ի տարբերություն Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ)՝ օպերացիոնալ տեսանկյունից Արևելյան գործընկերությունն ավելի ֆոկուսացված և առարկայական բնույթ է կրում, թեև համագործակցության ստեղծվող ձևաչափն առայժմ բավարար չափով ինստիտուցիոնալացված չէ: Ավելին, չնայած ԵՄ պաշտոնական դիտանկյունից ծրագիրն իր մեջ կրում է նշանակալի *ֆունկցիոնալիստական* չափում (միջազգային հարաբերությունների տեսական մոտեցումներից մեկը, որը ենթադրում է արտաքին և ներքին քաղաքականությունների համասեռություն) և նպատակային հեռահար ուղղվածություն ունի հասնելու ԵՄ և վերոհիշյալ երկրների կառավարչական, էներգետիկ և քաղտնտեսական սեկտորների սինխրոնիզացման բարձրացմանը, այդուհանդերձ ծրագրի իրագործումը կարող է ակնհայտ դարձնել մեկ այլ մեզամիտում, որի հենքում ընկած կլինեն ավանդական ռազմավարական մրցապայքարի շարժառիթները: Բոլոր վեց պետությունները, որոնք Գործընկերության մասնակից են, մտնում են այսպես կոչ-

¹“Joint declaration of the Prague Eastern Partnership Summit”, 7 May 2009, Prague, (points 2- 9).

ված ՌԴ «մերձավոր արտասահմանի» աշխարհագրական գոտու մեջ, որի նկատմամբ դեռ 1993թ. Մոսկվան առաջ էր քաշել և դոկտորինալ մակարդակում հաստատել էր իր առանձնահատուկ պատասխանատվության և որոշիչ ազդեցության մասին թեզը: Օրինակ, 2008թ. ՌԴ Արտաքին քաղաքականության հայեցակարգում հստակորեն մատնանշվում է հիշյալ տարածաշրջանում ՌԴ «արտոնյալ շահերի» գոյության փաստը: Այս համադրույթի շրջանակներում որևէ երրորդ ուժի ներգրավման ծավալների և տեմպերի աճը ԱՊՀ սահմաններում ռուսաստանյան քաղաքական վերնախավի շրջանում դիտարկվում է իբրև ՌԴ *զսպմանը կամ հավասարակշռմանն* ուղղված քաղաքականություն:

Քաղաքական և ռազմավարական դիսկուրսի և պրակտիկայի հարթության մեջ, հաշվի առնելով վերոհիշյալ իրողությունը, Արևելյան գործընկերությունն ծրագիրը փաստացիորեն իր մեջ կրում է երկակի՝ որոշ իմաստով հակասական միջազգային կողմնորոշումներ: Մի կողմից Գործընկերության ծրագիրը կարող է խթանել փոխգործակցային ուղղության զարգացումը՝ նպաստելով համընդհանուր եվրաստլանտյան անվտանգության և կայունության նոր ճարտարապետության կայացմանը՝ Ռուսաստանի անմիջական մասնակցությամբ,² մյուս կողմից այն կարող է սկիզբ դնել մրցակցային տարրերի ուժգնացմանը, ինչն իր գործնական դրսևորումը կարող է գտնել ավանդական զսպման և բալանսավորման ռազմավարությունների մեջ, որոնք, հնարավոր է, կորդեգրեն միմյանց հանդեպ տարածաշրջանային զարգացումների մեջ ներգրավված երկու ակտորները՝ Ռուսաստանը և ԵՄ-ն: Ընդ որում, հատկանշական է, որ երկու կողմերն էլ փաստորեն ընդունում են, որ հետխորհրդային տարածաշրջանում նրանք ոչ բարեկամներ են, ոչ էլ թշնամիներ:

Ստորև կփորձենք ակադեմիական և հայեցակարգային (քաղաքական) դիսկուրսների շրջանակներում վերլուծել, թե ինչպիսին է հարաբերակցությունն այս երկու կողմնորոշումների միջև, և արդյո՞ք հնարավոր է էկստրապոլյացիա անել Եվրամիության կողմից գործադրվող և գործադրվելիք քայլերը, մասնավորապես 2008թ. ռուս-վրացական պատերազմի լույսի ներքո, հավասարակշռման վարքագծերից որևէ մեկի դասին, ինչպես դա պնդում են ռուսաստանյան քաղաքական վերնախավի որոշ հատվածներ:

Սկզբնական շրջանում Եվրոպական հարևանության քաղաքականության հենքում ընկած էր «բարեկամների շրջանակի», կայունության, անվտանգության և բարգավաճման գոտու ստեղծումը ԵՄ-ի շուրջ: Հիշյալ ընդ-

² Россия XXI века: образ желаемого завтра, *Институт современного развития, М.2010, ст.47.*

հանուր հայեցակարգի իրագործման հիմնական միջոցների շարքում էր զգալի տնտեսական և քաղաքական օժանդակության տրամադրումը հարևան տարածաշրջանների երկրներին՝ կոնսոլիդացնելու և արագացնելու համար վերջիններիս զարգացման ծրագրերը: Այդուհանդերձ, Բրյուսելում նախապես ընդգծեցին, որ ԵՀՔ-ի ծրագիրը միտված չէ վերաճելու ընդլայնման մի նոր փուլի: Ավելին, հարևանության ծրագիրը իր մեջ ներառում է բավականին խայտաբղետ պետություններ և տարածաշրջաններ, որոնք տարբերվում են ոչ միայն իրենց պատմական ժառանգության յուրահատկությամբ և զարգացման ուղիների «ձևաչափերով», այլ նաև գեոռազմավարական տեղայնացմամբ: Ավելի լայն իր մեջ ընդգրկում է ինչպես Արևելյան Եվրոպան, այնպես էլ Հյուսիսային Աֆրիկայի ու Մերձավոր Արևելքի մի շարք պետություններ: Այս համատեքստում զարմանալի չէր Ուկրաինայի ղեկավարության պնդումն այն մասին, որ ԵՀՔ-ն չի կարող ԵՄ-Ուկրաինա հարաբերությունների զարգացման իրատեսական և առարկայական հարթակ հանդիսանալ:

Կարճաժամկետ, սակայն ռազմավարական հեռանկարում ԵՀՔ-ի «անորոշության» սաստակցմանը և քաղաքականության արդյունավետության աստիճանի կորստին նպաստեց նաև ԵՄ-ի և ԱՄՆ-ի երբեմնի համակարգված, բազմակողմ ջանքերի ակնհայտ նահանջը, ինչն ակնառու դարձավ մասնավորապես 2003թ. Իրաքյան պատերազմի հետևանքով ի հայտ եկած հակասությունների ֆոնին:³ Արևելյան գործընկերության մեկնարկն այս տեսանկյունից միտված էր ավելի առարկայական և կոնկրետ ուղեգծի վերածել հետխորհրդային գոտում ԵՄ-ի իրական շահերի համախումբը՝ խթանելով ԵՄ-ի արևելյան քաղաքականության շարժառիթների շուրջ խորացող քննարկումը:⁴

ԵՄ-ի ԱԳ ծրագրի նկատմամբ քաղաքական մոտեցումների երկու խոշոր խմբեր է հնարավոր առանձնացնել: Դրանցից առաջինը, որը գերակայող էր, մասնավորապես, սկզբնական փուլում (2008-2009թթ.), ելնում էր մայրցամաքային արդի իրադրության քաղաքական և ռազմավարական բևեռայնության թեզից (system-level polarity): Այսպես, «Արտաքին քաղաքականության գերմանական խորհրդի» ծրագրի ղեկավար Ա. Ռարի կարծիքով Արևելյան գործընկերությունը Եվրահանձնաժողովի «ոչ առավել նշանակալի օրակարգն է, որը Եվրամիությունը մշակել է արևելյան ուղղության քաղաքակա-

³ A.Basora, Must Democracy Continue to Retreat in Postcommunist Europe and Eurasia, Orbis 2008, Winter, pp. 3-24.

⁴ Եվրոպական Միության արտաքին և անվտանգության քաղաքականությունը Հարավային Կովկասում. Միջմասնագիտական հետազոտություն, ԵՊՀ Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն, Եր. 2010, էջ 54-64:

նության ուղղորդման համար»: Գերմանիան և Ֆրանսիան, որոնք մինչ այժմ ձգտում էին համակարգել ԵՄ գործունեությունը արևելքում, կողմնորոշված էին զարգացնելու առաջին հերթին համագործակցությունը Ռուսաստանի հետ: Ա. Ռարին նշում է. «Այժմ մենք թևակոխում ենք մի նոր փուլ, երբ Ռուսաստանին կմեկուսացնեն և կսկսեն նրա վրա ճնշում գործադրել: ԵՄ-ն իսկապես անհանգստացավ ռուս-վրացական պատերազմով, և այդ հակամարտության մեղքը վերագրում է ոչ միայն Միխեիլ Սաակաշվիլուն: Մինչդեռ Մոսկվայի կողմից Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչումը դիտարկվում է իբրև ռուսաստանյան բռնակցում: Ներկայումս ԵՄ-ը կանցնի հետխորհրդային տարածաշրջանում իր շահերի գոտու ամրապնդմանը»: Հատկանշական է, որ գերմանացի փորձագետը ընգծեց մի կարևոր հանգամանք. ԵՄ-ը ներառում է իր շահերի ոլորտ նաև Բելառուսին և Ադրբեջանին, ինչը փաստում է այն մասին, որ Միության մտադրությունը ոչ այնքան մերձենալն է ժողովրդավարական պետություններին, որքան Ռուսաստանին զսպելը:

Գործընկերության ծրագիրը նախատեսում է ոչ միայն միլիոնավոր եվրոների տրամադրում հիշյալ վեց պետություններում քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ինստիտուտների զարգացման համար, այլև տնտեսական ազատ գոտու և ազատ մուտքի ռեժիմների ստեղծում (ներկայումս չի քննարկվում ՌԴ-ին նման վիզային արտոնությունների շնորհման հարցը), ինչը լրջորեն սպառնում է խարխուլել հետխորհրդային տարածաշրջանում միասնական տնտեսական գոտի հիմնելու Մոսկվայի վաղեմի նախագիծը: Փորձագետների կարծիքով, փաստաթղթի ընդունումը տազնապալի ազդանշան է Ռուսաստանի համար, քանզի ՌԴ-ի շուրջ նոր պատնեշի ի հայտ գալու վտանգը կարող է առարկայական ուրվագծեր ընդունել: Թեև փաստաթղթում Ռուսաստանն ուղղակիորեն չի քննադատվում, սակայն Մոսկվայի ազդեցությունը նախկին ԽՍՀՄ տարածքում թուլացնելու միտումն ակնհայտ է: Օրինակ, արդեն ԱԳ-ի ձևաչափում դարձյալ վերահաստատվում է ԵՄ-ի հաստատակամությունը օժանդակելու Nabucco ծրագրին, ինչպես նաև առհասարակ էներգակիրների տարանցիկ ուղիների զարգացմանը, որոնք կշրջանցեն Ռուսաստանը: Ճիշտ է, միևնույն ժամանակ, ԵՄ չի հրաժարվում Բալթյան ծովի հատակով «Հյուսիսային հոսք» նախագծի իրագործումից, որով ենթադրվում է ռուսաստանյան գազի մեծ ծավալների արտահանում Գերմանիա:⁵

⁵ А.Терехов, Евросоюз задвигает Россию в Азию, *Независимая газета*, 02.12.2008.

Հիշյալ տեսակետը, որը տարածված է նաև ռուսաստանյան ղեկավարության մի զգալի մասի շրջանում, որոշակիորեն համահունչ է նաև պաշտոնական Մոսկվայի մոտեցումների հետ: ՌԴ արտգործնախարարը որոշակի անհանգստություն և դժգոհություն հայտնեց այն կապակցությամբ, որ ԵՄ-ի որոշ երկրներ բևեռային հարցադրումներ են դնում ծրագրին մասնակից պետությունների առջև՝ նրանց դնելով երկրնտրանքի առջև՝ դուք կամ Ռուսաստանի հետ եք, կամ՝ ԵՄ-ի: 2009թ. ապրիլին Մոսկվայում ՌԴ ԱԳՆ-ում Եվրամիության արտաքին քաղաքականության համար պատասխանատու պաշտոնյաների հետ կայացած հանդիպման ժամանակ կողմերը քննարկեցին Արևելյան գործընկերություն ծրագիրը: Ռուսաստանյան կողմը առանձնակի ուշադրություն էր սևեռել ԱՊՀ-ում Ռուսաստանի օրինական շահերի հետ հաշվի նստելու, ինչպես նաև ԱՊՀ շրջանակներում Մոսկվայի ինտեգրացիոն գործընթացները զարգացնելու ՌԴ պարտականությունները հարգելու խնդրի վրա, ինչպես նաև, ծրագիրը իրագործելիս եվրոպական մայրցամաքում նոր բաժանարար գծերից խուսափելու անհրաժեշտության վրա:⁶

Ավելին, Գործընկերության մասնավորապես մեկնարկային փուլում Մոսկվան ավելի մեծ չափով էր հակված ակնարկելու իր պատրաստակամությունը առկա հակասությունները տեղափոխել այլ հարթություն և բարձրացնել հնարավոր հակադեցության քայլերի մակարդակը՝ միակցելով Արևելյան գործընկերության շուրջ ծավալվող բանավեճը ավելի լայն ռազմավարական հիմնահարցերի համախմբին: Ըստ Ս. Լավրովի. «Ակհնայտ է, որ գլոբալ և տարածաշրջանային քաղաքականության մեջ, առաջին հերթին Եվրաստանի տարածքում, պահպանվում է մնացորդային երկբևեռությունը: Այն օբյեկտիվորեն պայմանավորված է ռազմավարական անվտանգության ոլորտով, որը նույնպես շարունակում է մնալ ռուս-ամերիկյան հարաբերությունների վճռական ածանցյալը»:⁷ Անդրադառնալով եվրաստանյան տարածաշրջանում անվտանգության ապահովման ձևաչափերին և մեխանիզմներին՝ Ս. Լավրովը մատնանշեց անվտանգության անքակտելիության (միասնականության) սկզբունքի գոյությունը, որն արտացոլված է գործող պայմանավորվածությունների և փաստաթղթերի մեջ: Բայց և այնպես, ըստ նրա՝ այդ մեխա-

⁶ О встрече заместителя Министра иностранных дел России А.В.Грушко с директором Гендиректората КЕС по внешним связям Г.Вигандом и главой представительства Комиссии ЕС в Москве М.Франко, 03.04.2009, www.mid.ru.

⁷ Статья Министра иностранных дел России С.В.Лаврова "Внешняя политика России и новое качество геополитической ситуации" для "Дипломатического ежегодника 2008", www.mid.ru. (10.12.2009).

նիզմներից մի քանիսը, մասնավորապես նրանք, որ վերաբերում են «կոշտ անվտանգությանը» (hard security) գոյություն ունեն քաղաքական պարտավորությունների ձևով, և, ըստ երևույթի, չեն աշխատում: Ռուսաստանյան քաղաքական վերնախավում տիրապետող կարծիքն այն է, որ դրանք չեն աշխատում արդեն շատ վաղուց՝ ԽՍՀՄ-ի փլուզումից ի վեր, երբ ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի արևելք անշրջելի բնույթ ստացավ: Այս համատեքստում, «կոշտ անվտանգության» պահպանման գործառույթներ ստանձնելու ԵԱՀԿ-ի դժկամությունը զգալիորեն նսեմացրեց կազմակերպության կարգավիճակային դերակատարությունը ՌԴ էլիտայի շրջանում:

Այդուհանդերձ, չնայած նախնական բավականաչափ կոշտ արձագանքներին, Արևելյան գործընկերության կապակցությամբ ԵՄ-ՌԴ միջև ծագած հակասությունները ներկա փուլում և միջնաժամկետ հեռանկարում քիչ հավանական է, որ վերածվեն կարծր բալանսավորման կամ զսպման քաղաքականության, որը բնորոշ է ավանդական աշխարհաքաղաքական մրցապայքարին: Այդ մասին են փաստում ինչպես վերջին ամիսների ընթացքում ՌԴ-ի մոտեցումներում գրանցված փոփոխությունները, այնպես էլ ստորև ներկայացվող ակադեմիական և տեսական հետազոտությունների էմպիրիկ բնույթի հիմնադրույթները: Ավելին, թեև Եվրամիության հիշյալ ծրագրի շուրջ որոշակի հակասություններ ի հայտ եկան ՌԴ-ԵՄ երկկողմ հարաբերություններում, որոնք գլխավորապես կրում էին մրցակցային, բայց ոչ արմատական անհանդուրժողականության բնույթ, հարկ է ի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ թե՛ Մոսկվան, և թե՛ Բրյուսելը անհատական համագործակցության բավականին ծավալուն օրակարգ են ձևավորել: 2004թ. նրանց միջև ստորագրված չորս ընդհանուր տարածությունների ձևավորման մասին փաստաթղթում ամրագրված է ընդհանուր մի հիմնադրույթ - համաձայնություն, ըստ որի ԵՄ-ի կողմից զարգացվող ինտեգրացիոն գործընթացները չպետք է հակասեն հետխորհրդային տարածքում ընթացող ինտեգրացիոն գործընթացներին: Ընդ որում, առանձնացված են փոխգործակցության չորս ընդհանուր չափումներ՝

- արտաքին անվտանգության ընդհանուր տարածք,
- ազատության, անվտանգության և արդարադատության ընդհանուր տարածք,
- տնտեսական ընդհանուր տարածք,

– գիտա - տեխնիկական, կրթական և մշակութային ընդհանուր տարածք:⁸

Նախ, իրական արտաքին հավասարակշռման և զսպման ռազմավարության սանձազերծումը Ռուսաստանի դեմ հետխորհրդային տարածաշրջանում կարող է աննախադեպ վտանգավոր և համալիր նախաձեռնություն դառնալ, որի արդյունքների և հետևանքների հաշվարկը խիստ բարդ կլինի: Օրինակ, Մթենֆորդի համալսարանի մասնագետների լայնածավալ հետազոտական աշխատության հեղինակները գրեթե անհնարին են համարում հետխորհրդային տարածաշրջանում ներքին հավասարակշռման քաղաքականության շանսերն ընդդեմ Ռուսաստանի՝ ի նկատի ունենալով այն հսկայական ռեսուրսային անհամաչափությունը, որ գոյություն ունի մի կողմից Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ մնացյալ բոլոր նախկին խորհրդային հանրապետությունների ագրեգացված տնտեսական և ռազմաքաղաքական միջոցների միջև: Ըստ ամերիկյան մասնագետների՝ իրական հավասարակշռումը կարող է հենվել միմիայն արտաքին ուժային կենտրոնի վրա և միաժամանակ կրել զուտ արտաքին բալանսավորման բովանդակություն: Ավելին, ըստ Վ.Վոլֆորթի բոլոր այս հանրապետությունների կախվածության աստիճանը Ռուսաստանից կրիտիկական է, ինչն անիրական է դարձնում վերջիններիս միավորումը Ռուսաստանի դեմ ուղղված հավասարակշռում կազմակերպելու համար:⁹

Երկրորդը, տարածաշրջանային թատերաբեմում իր հզորությամբ քիչ թե շատ Ռուսաստանին համարժեք պետության բացակայության պարագայում իրական հավասարակշռման քաղաքականության նախապայմաններից մեկն է տարածաշրջանային պետությունների բարձր համասեռության ապահովումը, ինչը գործնականում անհնարին է՝ հաշվի առնելով հիշյալ երկրների՝ ՌԴ-ից կառուցվածքային կախվածության աստիճանը: Ճիշտ է, դրա հետ մեկտեղ, առայժմ զուտ տեսականորեն, չի բացառվում տարածաշրջանային եվրոպակենտրոն ունիֆիկացման բարձրացումը Գործընկերության շրջանակներում իրականացվելիք միջոցառումների շնորհիվ, ինչն իր հերթին կարող է հնարավոր բալանսավորման հարթություններից մեկը դառնալ:

Երրորդը, նեոռեալիստական ավանդույթի շրջանակներում բալանսավորման կարևորագույն հաշվարկային գործոններից մեկն է կողմերի մտադ-

⁸ “Четыре общих пространства” (2005), http://www.delrus.ec.europa.eu/ru/p_600.htm (10.12.2009).

⁹ W.C. Wohlforth, Revisiting Balance of Power Theory in Central Eurasia in *Balance of Power: Theory and Practice in the 21st Century*, ed. by T.V.Paul, James J. Wirtz, and Michael Fortmann, Stanford University, 2004, p.226.

րությունները: Այս տեսանկյունից, չնայած գոյություն ունեցող որոշակի անհանգստություններին, ԵՄ-ն զերծ է մնում թե կոշտ և թե փափուկ համապարփակ բալանսավորման մտադրություններ արտահայտելուց:

Վերոհիշյալ հայեցակարգային հիմնադրույթներն իրենց արտացոլումն են գտնում նաև գործնական քաղաքականության բնագավառում՝ առաջին հերթին կողմերի գործիքային մոտեցումներում, որոնք ակներև դարձան մասնավորապես 2009թ. վերջին եռամսյակում: Նախ, պաշտոնական Մոսկվան ավելի մեծ ուշադրություն սկսեց սևեռել Գործընկերության առանձին ֆունկցիոնալ ասպեկտների վրա՝ դադարելով այն դիտարկել Grand Strategy խաղի կանոններին համապատասխան: Մասնավորապես, առանձնացվեց ծրագրի էներգետիկ բաղադրիչը, որն ըստ փորձագիտական հանրության՝ առավել վտանգավոր մարտահրավեր է արդիական ռուսաստանյան արտաքին քաղաքականության համար: Երկրորդը, 2009թ. նոյեմբերի վերջին արտգործնախարար Ս.Լավրովը չբացառեց, որ ՌԴ կարող է միանալ ԱԳ-ին՝ համահավասարության սկզբունքի վրա, իսկ նոյեմբերի 27-ին անմիջապես Մոսկվայում ստորագրվեց Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի միջև «Մաքսային միության» ստեղծման համաձայնագիրը: Երկու օր անց, նոյեմբերի 29-ին հրապարակվեց Ռուսաստանի կողմից մշակված «Եվրոպական անվտանգության պայմանագրի» նախագիծը, որում հաստատվում էր «անվտանգության անբաժանելի լինելու» սկզբունքը և այն, որ «Եվրաստլանտյան գոտու ոչ մի պետություն կամ միջազգային կազմակերպություն չպետք է ուժեղացնի իր անվտանգությունը այլ պետությունների կամ կազմակերպությունների հաշվին»:¹⁰ Վերջապես երրորդը, ի նկատի ունենալով ԵՄ-ՌԴ Համագործակցության համաձայնագրի ստորագրման շուրջ կողմերի փոխգործակցության տարեվերջյան ակտիվացումը՝ ակնհայտ է դառնում, որ երկու դերակատարներն էլ սակարկելու հակվածություն ունեն:¹¹

Այսպիսով, ԵՄ Արևելյան գործընկերություն ծրագրի հանդեպ պաշտոնական Մոսկվայի քաղաքական մոտեցումը իր վրա կրում էր երկակի միտումների ազդեցություն, որոնք սկզբնական փուլում ավելի շատ հակված էին դեպի կոշտ անվտանգության շուրջ դիսկուրսի ծավալում: Օրինակ, 2009թ. մարտին ռուսաստանյան ներկայացուցիչը բրյուսելյան հանդիպման ընթացքում հնչեցրեց մի քանի թեզեր, որոնք թեև ոչ բացահայտ, բայց առար-

¹⁰ www.kremlin.ru (10.01.2010).

¹¹ The Post-Soviet Space in EU-Russian Relations”, 03 Дек 2009 <http://eu-russiacentre.ru/our-publications/column/the-post-soviet-space-in-eu-russian-relations.html> (10.01.2010).

կայապես կոչված էին ընդգծելու ծավալվող գործընթացում ՌԴ մասնակցության (ուղղակի կամ անուղղակի) պարտադիր լինելը: Նախ, մասնանշվեց, որ թեև ԱԳ-ն հանդիսանում է Եվրամիության ներքին նախաձեռնություն, նրա ընթացքին, սակայն, Մոսկվայում մեծ ուշադրությամբ հետևում են, քանզի այն ուղղված է ՌԴ մերձավոր հարևաններին: Ընդհանուր այս հղումը միտված էր հաստատելու մի կողմից ՌԴ պատասխանատվության բացակայությունը ծրագրի նկատմամբ, մյուս կողմից իր մեջ կրում էր նաև քողարկված ակնարկ՝ անհրաժեշտության դեպքում միջամտելու Մոսկվայի համար անբարենպաստ զարգացումներին:¹²

Երկրորդը, ռուսաստանյան դիվանագետները նշեցին, որ Մոսկվայում շարունակում են մի շարք հարցեր մնալ՝ կապված ԱԳ հավելյալ արժեքի հետ՝ Եվրամիության հարևանության քաղաքականության հետ համադրման ֆոնին, որի սուբյեկտներն են նույն Ուկրաինան, Մոլդովան, Վրաստանը, Հայաստանը, Բելառուսը և Ադրբեջանը:

Երրորդը, առանձնացվեցին Գործընկերության «ինտեգրացիոն» առաջարկները, որոնք վերաբերում են ազատ առևտրի գոտիների, ասոցիացիաների, ԵՄ տնտեսությանը աստիճանական սերտաճման շուրջ համաձայնություններին («մոբիլության և անվտանգության պակտեր», «էներգետիկ փոխկապվածություն»): Ըստ ռուսաստանյան կողմի՝ ՌԴ հարևանների և ԵՄ-ի միջև համագործակցության նման ճարտարապետությունը չպետք է հակասության մեջ մտնի հիշյալ պետությունների ինտեգրացիոն այլ պարտականությունների հետ, մասնավորապես ԱՊՀ-ի և ՀԱՊԿ-ի շրջանակներում, ինչն արդեն արտացոլված է ՌԴ-ԵՄ արտաքին անվտանգության ընդհանուր գոտու ճանապարհային քարտեզի մեջ: Դրա հետ մեկտեղ, Մոսկվայում զգացնել տվեցին, որ ՌԴ մոտեցումը Գործընկերությանը կրում է ավելի շատ գործիքային բնույթ, որը պետք է զուրկ լինի գաղափարական չափումից. Ռուսաստանը ինքը կարող է մասնակից լինել մի շարք նախաձեռնությունների, որոնք գործնական հետաքրքրություն են ներկայացնում իր համար:

Չորրորդը, պաշտոնական մակարդակով հնչեցված թերևս ամենակարևոր հիմնադրույթն այն է, որ առանց Ռուսաստանի լիարժեք մասնակցության լուրջ նախագծերի մեծամասնությունը «լավագույն դեպքում կունենա սահմանափակ էֆեկտ»: Դիվանագիտական լեզվից թարգմանաբար՝ այս դրույթն իր մեջ պարունակում է շատ կարևոր ռազմավարական մի ակնարկ, որի են-

¹² О российском отношении к программе «Восточное партнерство», Брифинг официального представителя МИД России А.А.Нестеренко, 26 марта 2009 года, www.mid.ru. (10.01.2010).

թատեքստում թաքնված է ռուսաստանյան արդեն վաղեմի կանխադրույթը ցանկացած պահի միջամտելու և կանխելու հետխորհրդային տարածաշրջանում անշրջելի գործընթացների ծավալումը, որոնք կհակասեն ՌԴ ազգային շահերին:

Ինչ վերաբերում է ԵՄ-ի Արևելյան գործընկերություն ծրագրի աշխարհաքաղաքական ուղղվածությանը և առհասարակ եվրոպական հանրության արևելյան քաղաքականությանը, ապա մի կողմ թողնելով ԵՄ ներքին տրանսֆորմացիայի և արտաքին մասնավոր ազդակներով պայմանավորված շարժառիթները՝ հարկ է նշել, որ վերջերս մեկնարկած նախաձեռնությունները ինկրեմենտալիստական բովանդակություն կրելուց զատ պարունակում են նաև լատենտ հավասարակշռման որոշակի տարրեր: Համենայնդեպս, ՌԴ հարակից եվրասիական գոտիներում ինտեգրացիոն նախագծերի մրցակցությունը համադրելիության բացակայության պայմաններում կարող է խթանել հեռանկարում հավասարակշռման և զսպման ռազմավարական կողմնորոշումը:

Եթե դիմենք ակադեմիական գրականությանը, ապա ըստ Տ. Փոլի՝ ժամանակակից բալանսավորման վարքագծերը ներառում են զանազան ռազմավարություններ, որոնք հնարավոր է առանձնացնել երեք դասերի մեջ. կոշտ (hard) հավասարակշռում, փափուկ (soft) հավասարակշռում և անհամաչափ (asymmetric) հավասարակշռում:¹³ Եթե միջնաժամկետ հեռանկարում չհաջողվի ձևավորել ՌԴ-ԵՄ հարաբերությունների դրական օրակարգ և արդյունավետ փոխգործակցության սխեմա, ապա վերոհիշյալ երեք ընդհանուր համադրություններից առավել հավանական մրցակցային փոխգործակցության վարքագծային մոդելը կլինի փափուկ հավասարակշռման քաղաքականությունը, որն իր մեջ կներառի ad hoc համագործակցության հնարավորություն միջազգային կամ տարածաշրջանային ձևաչափերում՝ ուղղված ընդդեմ մրցակից պետության (պետությունների միավորումների): Անվտանգության մրցապայքարի կարծրացման դեպքում այդ քաղաքականությունը հնարավոր կլինի ձևափոխել կոշտ հավասարակշռման ռազմավարության՝ ընդդեմ սպառնալիք ներկայացնող կողմի:¹⁴

¹³ T.V.Paul, Soft Balancing in the age of US Primacy, *International Security*, N1, 2005 (Summer), 46-71.

¹⁴ D.H.Nexon, The Balance of Power in the Balance, 2009 April, *World Politics*, 61, N2, pp.341-342.